

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով կիսաբաց և կիսափակ ուղղիչ հիմնարկները և այնտեղ պատիժը կրելու ժամկետները նույնացվել են, մինչդեռ անհրաժեշտ է հստակ տարանջատել փակ ուղղիչ հիմնարկից կիսափակ ուղղիչ հիմնարկ, այնուհետև

կիսափակ ուղղիչ հիմնարկից կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու ժամկետները, որպեսզի պահպանվեն պատիժների կատարումը տարբերակելու և անհատականացնելու, ինչպես նաև պատիժների և ուղղման միջոցների զուգակցման սկզբունքները:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 4-րդ հոդվածի 1-ին մասում «վնասը հարթելու» բառերն անհրաժեշտ է փոխարինել «վնասը հատուցելու» բառերով՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «վնասը հարթելու» հասկացություն նախատեսված չէ.

2) նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասում «կարգով» բառն անհրաժեշտ է փոխարինել «կարգերը» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի փաթեթի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ
և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական
օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների ընդունման դեպքում**

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում, դրանց կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն: Նախագծերով կարգավորվում են ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալներին բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հետ կապված հարաբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական
օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն

“Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” և “Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” N 18-Ն որոշման համաձայն:

Գնահատման արդյունքում Նախագծերը՝

1. սոցիալական պաշտպանության ոլորտի վրա ունեն դրական ազդեցություն.
2. բնագավառի շահառուների վրա ազդեցության տեսանկյունից ենթակա չեն լրամշակման:

**ՀԱՎԱԿՈՒՄՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ
և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների (այսուհետ՝ օրենքների) նախագծերի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾՄ1. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (24 դեկտեմբերի 2004 թվականի, այսուհետ՝ օրենսգիրք) 68-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾՄ2. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ե» ենթակետով.

«ե) ցմահ ազատազրկման դատապարտված եւ կիսաբաց կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո»,

2) 2-րդ կետի «դ» ենթակետի «քսանհինգ» բառը փոխարինել «տասնհինգ» բառով,

3) 3-րդ կետի «բ» ենթակետի «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով:

ՀՈՂՎԱԾՄ3. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունում «ներկայացման հարցը» բառերը փոխարինել «ներկայացման՝ նույն հիմքով հարցը» բառերով:

ՀՈՂՎԱԾՄ4. Սույն օրենք ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համաձայն.

Նախագծով նախատեսվում է ցմահ ազատազրկման դատապարտված եւ կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հնարավորություն: Այս փոփոխությունը կվերացնի օրենսդրության մեջ առկա այն թերկարգավորվածությունը, որի պատճառով ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո կարող են պայմանական վաղաժամկետ ազատվել պատիժը կրելուց, սակայն նույն ժամկետից հետո չեն կարող տեղափոխվել ամելի ցածր մեկուսացվածության աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատիժը կրելու համար: Այսինքն՝ նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար կհեշտացվի բաց, կիսաբաց եւ կիսափակ ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու հնարավորությունը: Այսպես, ցմահ ազատազրկման դատապարտված եւ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալները հնարավորություն ձեռք կբերեն փոխադրվելու կիսափակ կամ կիսաբաց ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն 15 տարին կրելուց հետո (ներկայումս սահմանված 20 տարվա փոխարեն), իսկ բաց ուղղիչ

հիմնարկ՝ նշանակված պատժի առնվազն 20 տարին կրելուց հետո (ներկայումս այն սահմանված չէ):

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխության արդյունքում հստակ տարբերակում կդրվի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու եւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ անկախ հանձնաժողովներին ներկայացվող միջնորդագրերի միջեւ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համաձայն.

Նախագծով նախ եւ առաջ վերացվում են պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս տուգանքի եւ հանրային աշխատանքների նշանակման հնարավորության հետ կապված անհստակությունները եւ դրանք նախատեսող հոդվածներում հատուկ նշվում է ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի կիրառման ժամանակ դրանց նշանակման հնարավորությունը:

Առաջարկվում է էականորեն կատարելագործել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կիրառման հնարավորությունը՝ համապատասխան իրավական կարգավորումները զուգահեռ պահելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգին: Մասնավորապես, ի տարբերություն ներկայիս կարգավորման՝ ընդլայնվում են դրա կիրառման շրջանակները՝ ներառելով բոլոր ծանրության հանցագործությունները կատարած անձանց, բացառությամբ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց (այստեղ նկատի է առնվում այն, որ, չնայած այս կառուցակարգի համեմատ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ավելի բարվոք լինելուն, պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ինստիտուտի կիրառումից առժամանակ անց բացակայում է որեւէ իրավական հետեւանքը):

Ուստի այս փոփոխությունների արդյունքում էականորեն կընդլայնվի ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով սահմանված կառուցակարգի պրակտիկ կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ ի համեմատ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման: Բացի այդ, նախագծով յուրաքանչյուր ծանրության հանցագործության համար նախատեսվում է ազատազրկման ձեւով պատիժ կրելու փաստացի ժամկետ, որը կրելուց հետո միայն դատապարտյալի նկատմամբ կարող է կիրառվել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը: Հստակ սահմանվում է նաեւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս տուգանքի եւ հանրային աշխատանքների հաշվարկման կարգը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (18 ապրիլի 2003 թվականի, այսուհետ՝ օրենսգրք) 51-րդ հոդվածի 1-ին մասը «Հատուկ մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 77-րդ հոդվածով» բառերով:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենսգրքի 54-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «անձանց նկատմամբ» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված դեպքերում» բառերով,

2) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասի «եթե դատարանը գտնի, որ նա պատիժը հետագա կրելու կարիքը չունի եւ փաստորեն կրել է» բառերը փոխարինել «եթե դատապարտյալը փաստացի կրել է» բառերով:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենսգրքի 77-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Որոշակի ժամկետով ազատազրկման ձեռով պատիժ կրող անձի պատժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով՝ հաշվի առնելով պատիժը կրելու ժամանակահատվածում նրա դրսևտրած վարքագիծը եւ տուժողին պատճառված վնասը հարթելու հանգամանքը: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից:

2. Պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը.

3) առանձնապես ծանր հանցագործության, բացառությամբ սույն մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը.

4) սույն օրենսգրքի 104-րդ հոդվածի երկրորդ մասով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 138-րդ հոդվածի երրորդ մասով, 139-րդ հոդվածի երրորդ մասով, 175-րդ հոդվածի երրորդ մասով, 217-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերով, 218-րդ հոդվածի երրորդ մասով, 221-րդ հոդվածի երկրորդ եւ երրորդ մասերով, 222-րդ հոդվածի առաջին մասով, 266-րդ հոդվածի երրորդ մասով, 269-րդ հոդվածի երրորդ մասով, 299-րդ հոդվածի առաջին մասով, 305-րդ հոդվածով, 384-րդ հոդվածի երկրորդ մասով, 387-րդ հոդվածի երկրորդ մասով, 388-րդ հոդվածի երկրորդ մասով, 389-րդ հոդվածով, 390-րդ հոդվածի առաջին եւ երրորդ մասերով, 391-րդ հոդվածի հոդվածի երրորդ մասով, 392-րդ, 393-րդ եւ 394-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը:

3. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս որոշակի ժամկետով ազատազրկման ձեռով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող երեք ամսից պակաս լինել:

4. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս դատարանը կարող է ընտրել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ կետով նախատեսված պատիժը՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում: Ընդ որում՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս կիրառվում են պատիժները փոխարինելու սույն օրենսգրքի 51-րդ, 68-րդ եւ 69-րդ հոդվածներով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածով սահմանված կարգը չի գործում ներման ակտով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքում: Ընդ որում, ներման ակտով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս կարող է ընտրվել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված ցանկացած ավելի մեղմ պատժատեսակ՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում:»:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն օրենք ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համաձայն.

Նախագծով նախատեսվում է ցմահ ազատազրկման դատապարտված եւ կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հնարավորություն: Այս փոփոխությունը կվերացնի օրենսդրության մեջ առկա այն թերկարգավորվածությունը, որի պատճառով ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո կարող են պայմանական վաղաժամկետ ազատվել պատիժը կրելուց, սակայն նույն ժամկետից հետո չեն կարող տեղափոխվել ամելի ցածր մեկուսացվածության աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատիժը կրելու համար: Այսինքն՝ նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար կհեշտացվի բաց, կիսաբաց եւ կիսափակ ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու հնարավորությունը: Այսպես, ցմահ ազատազրկման դատապարտված եւ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալները հնարավորություն ձեռք կբերեն փոխադրվելու կիսափակ կամ կիսաբաց ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն 15 տարին կրելուց հետո (ներկայումս սահմանված 20 տարվա փոխարեն), իսկ բաց ուղղիչ հիմնարկ՝ նշանակված պատժի առնվազն 20 տարին կրելուց հետո (ներկայումս այն սահմանված չէ):

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխության արդյունքում հստակ տարբերակում կդրվի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու եւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ անկախ հանձնաժողովներին ներկայացվող միջնորդագրերի միջեւ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համաձայն.

Նախագծով նախ եւ առաջ վերացվում են պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս տուգանքի եւ հանրային աշխատանքների նշանակման հնարավորության հետ կապված անհատականությունները եւ դրանք նախատեսող հոդվածներում հատուկ նշվում է ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի կիրառման ժամանակ դրանց նշանակման հնարավորությունը:

Առաջարկվում է էականորեն կատարելագործել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կիրառման հնարավորությունը՝ համապատասխան իրավական կարգավորումները զուգահեռ պահելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգին: Մասնավորապես, ի տարբերություն ներկայիս կարգավորման՝ ընդլայնվում են դրա կիրառման շրջանակները՝ ներառելով բոլոր ծանրության հանցագործությունները կատարած անձանց, բացառությամբ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց (այստեղ նկատի է առնվում այն, որ, չնայած այս կառուցակարգի համեմատ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ավելի բարվոք լինելուն, պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ինստիտուտի կիրառումից առժամանակ անց բացակայում է որեւէ իրավական հետեւանքը):

Ուստի այս փոփոխությունների արդյունքում էականորեն կընդլայնվի ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով սահմանված կառուցակարգի պրակտիկ կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ ի համեմատ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման: Բացի այդ, նախագծով յուրաքանչյուր ծանրության հանցագործության համար նախատեսվում է ազատազրկման ձեւով պատիժ կրելու փաստացի ժամկետ, որը կրելուց հետո միայն դատապարտյալի նկատմամբ կարող է կիրառվել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը: Հստակ սահմանվում է նաեւ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս տուգանքի եւ հանրային աշխատանքների հաշվարկման կարգը: